Հրահանգ

ընտրություններին սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների ինքնուրույն մասնակցությանն աջակցումը

Թբիլիսի, 2024 Թվական

Բովանդակություն

Ներածություն 2

Տերմինների բացատրություն 3

Հարմարեցված/մատչելի ընտրական տեղամաս 4

Հարմարեցված/մատչելի ընտրական տեղամաս պահանջելու ընթացակարգը 6

ՍՀՈՒ ընտրողների ընտրություններին մասնակցելու ընթացակարգը 9

ՍՀՈՒ ընտրողների հետ հետ խոսելու և վարվելակարգի էթիկետը 11

Ներածություն

Սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների համար՝ ընտրություններին այլ ընտրողներին հավասար մասնակցությանն աջակցումը նրանց հիմնարար իրավունքի իրացումն է:

Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի 18 տարեկանից իրավունք ունի մասնակցելու հանրաքվեի, պետական, ինքնավար հանրապետության և մունիցիպալիտետի մարմինների ընտրություններին: Ապահովված է ընտրողի ազատ կամարտահայտումը:

Համաձայն Վրաստանի օրենսդրության և Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի՝ ընտրական վարչությունը, համագործակցելով Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հետ, խթանում է Վրաստանում ներառական ընտրական միջավայրի ստեղծումը և զարգացումը: Տարիներ շարունակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) մի շարք կարևոր գործունեություններ է իրականացրել ընտրություններին սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների (ՍՀՈՒ ընտրող) հավասար մասնակցության համար:

Ստեղծվել և ներդրվել են նոր ծառայություններ՝ ընտրություններին ՍՀՈՒ անձանց ինքնուրույն մասնակցելու համար: Մասնավորապես, ԿԸՀ պաշտոնական կայքը հասանելի է տեսողության խնդիր ունեցող և տեսողությունից զուրկ անձանց համար, պատրաստվում են տեղեկատվական տեսահոլովակներ ժեստերի լեզվով, ԿԸՀ հեռախոսային/տեղեկատվության կենտրոնում խուլ և լսողության խնդիրներ ունեցող ընտրողները ընտրական հարցերի վերաբերյալ կարող են տեղեկատվություն ստանալ ժեստերի լեզվով, ՍՀՈՒ անձանց համար պատրաստվում են տեղեկատվական տեսահոլովակներ մատչելի ծառայությունների մասին, որը հասանելի է ժեստերի լեզվով, աջակցություն ստացող անձանց համար պարզ ընթեռնելի ձևաչափով կազմվել է ընտրությունների մասնակցության ուղեցույց, որը խուլ անձանց հասանելի է նաև ժեստերի լեզվով՝ առդիո ձևաչափով: Ընտրությունների շրջանում ապահովվում է ՍՀՈՒ անձանց զբաղվածություն: Քվեարկության օրը հասանելի է. տեսողությունից զուրկ ընտրողների համար՝ քվեաթերթիկը լրացնելու համար շրջանակ/ձև, տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար՝ խոշորացնող ոսպնյակ, անվասայլակից օգտվող ընտրողների համար՝ քվեախցիկներ, խուլ, լսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար և տեսողությունից զուրկ ընտրողների համար՝ քվեարկության օրվա ընթացակարգերը պատկերող պաստառ, որի վրա տեղ գտած QR ընթերցիչը տեղեկությունը հասանելի է դարձնում ժեստերի լեզվով և ձայնային ձևաչափով:

Տարիների ընթացքում իրականացված բազմաթիվ գործունեություններ ցույց են տվել, որ ընտրություններին մասնակցության համար, ֆիզիկական միջավայրի հասանելիության հետ մեկտեղ, կարևոր է հասարակության վերաբերմունքը և այլոց պես հավասար ծառայությունների մատուցումը: Հենց բարձր իրազեկվածությունն է հիմք ստեղծում նրա համար, որ ընտրական միջավայրը լինի ներառական: Ելնելով ասվածից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ), ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի (Ուսումնական կենտրոն) և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հետ համատեղ համագործակցությամբ, մշակել է ուսումնական հրահանգ: Հրահանգի նպատակն է բարձրացնել ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների իրազեկվածությունը՝ ՍՀՈՒ ընտրողների հետ խոսելու էթիկետի, վարվելակերպի նորմերի պահպանման և ընտրություններին նրանց ինքնուրույն մասնակցությունը խթանելու մասին:

Տերմինների բացատրություն

Հնարավորությունների սահմանափակում – ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ շարժողական խախտում ունեցող անձանց համար անհատական զարգացման և ինքնահիրացման ուրիշներին հավասար հնարավորության բացակայություն, ինչը պայմանավորված է ֆիզիկական միջավայրի, հասարակության վերաբերմունքի և այլ գործոնների միասնությամբ:

Սահմանափակ հնարավորություն ունեցող անձ – կայուն ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ շարժողական խանգարումներ ունեցող անձ, որի փոխազդեցությունը տարբեր խոչընդոտների հետ կարող է խանգարել, որ այս անձը լիարժեք և մյուսների հետ հավասար պայմաններում արդյունավետ մասնակցի հասարակական կյանքին:

Ֆիզիկական խանգարում ունեցող անձ – վերին վերջույթ/վերջույթներ չունեցող անձ, անվասայլակից/հենակից օգտվող անձ, շարժունակության սահմանափակում ունեցող անձ:

Տեսողությունից զուրկ – տեսողության ամբողջական սահմանափակում ունեցող անձ:

Լսողությունից զուրկ, խուլ – լսողություն բոլորովին չունեցող կամ լսողության ամբողջական կորուստով անձ:

Լսողության խնդիր ունեցող – թույլ լսողություն ունեցող անձ:

Տեսողության խնդիր ունեցող անձ – թույլ տեսողություն ունեցող անձ:

Աջակցության ստացող անձ – անձ, որն ունի կայուն հոգեկան, մտավոր/ինտելեկտուալ խախտումներ, որոնց փոխազդեցությունը տարբեր խոչընդոտների հետ կարող է խանգարել, որ այս անձը լիարժեք և արդյունավետ մասնակցի հասարակական կյանքին մյուսների հետ հավասար պայմաններում: Ինչպես նաև, նշված խոչընդոտներն առանց պատշաճ խորհուրդի և օգնության զգալիորեն բարդացնում են մարդու ազատ կամարտահայտումը և տեղեկացված և կշռադատված ընտրության կատարումը՝ դատարանի կողմից սահմանված ոլորտում:

Ժեստերի լեզու – ձայների փոխարեն շրթունքների շարժման, ժեստերի կամ մարմնի պլաստիկայի միջոցով տառերի, հասկացությունների, բառերի արտահայտում: Ժեստերի լեզվում արձանագրված են այն ժեստերը, որոնց կիրառմամբ խոսում են խուլ և լսողության խնդիր ունեցող անձինք: Այս դեպքում ժեստերը հանդիսանում եմ բառերի համարժեքներ (բառակապակցություն, հասկացություններ):

Ժեստերի լեզվին տիրապետող – անձ, ով բառերը արտահայտում է ժեստերով և ձեռքի շարժումներով և այդպիսով շփում հաստատում խուլ ու լսողության խնդիր ունեցող անձանց հետ:

Ի՞նչ տերմիններ պետք է օգտագործեն ընտրական վարչակազմի աշխատակիցները սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների հետ խոսելու ժամանակ:	**Ի՞նչ տերմիններ չպետք է օգտագործեն ընտրական վարչակազմի աշխատակիցները սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների հետ խոսելու ժամանակ:**
Սահմանափակ հնարավորություն ունեցող անձ	անդամալույծ, արատավոր, ոչ լիարժեք, թերություն ունեցող, անկարողունակ, հաշմանդամ
Ֆիզիկական խախտում ունեցող անձ	սայլակին գամված, հաշմանդամ
Աջակցություն ստացող անձ	մտավոր հետամնաց, մտավոր սահմանափակ, ոչ գործունակ, հոգեկան հիվանդ
Տեսողությունից զուրկ, տեսողության խնդիր ունեցող	կույր, շլաչք, շլդիկ
Խուլ, լսողությունից զուրկ անձ	խուլ ու համր

Հարմարեցված/մատչելի ընտրատեղամաս

ի՞նչ է նշանակում հարմարեցված/մատչելի ընտրատեղամաս:

Հարմարեցված/մատչելի ընտրատեղամասը ենթադրում է ինչպես շենք-շինության արտաքին պարագիծը, այնպես էլ շինության մուտքի, ներքին տարածքի և քվեարկության սենյակի մատչելիություն[1]:

Շենք-շինության արտաքին պարագիծ – նշանակում է մինչև շենք տանող ճանապարհը, դարպասները և շենքի մուտքի դռները:

Դարպաս – դուռը պետք է բացվի ներսից կամ երկու ուղղությամբ էլ կամ ամբողջովին բաց լինի մատչելիության համար:

Շենքի մուտքի դուռ – շենքի հիմնական մուտքը պետք է լայն լինի, պետք է բացվի ներսից կամ երկու ուղղությամբ էլ, դռան մուտքի շեմի բարձրությունը պետք է այնպիսին լինի, որ անվասայլակից օգտվողը կարողանա հեշտությամբ տեղաշարժվել:

Շենքը մատչելի է, եթե այն ունի.

Թեքահարթակ – կա «փոքր թեքություն», թեք հարթություն, որն օգտագործվում է շենք մտնելու համար: Թեքահարթակը կարող է լինել տարբեր տեսակի. փայտյա, բենտոնից, մետաղյա կամ/և այլ:

Պարզ հարմարեցում – ինչը ենթադրում է, որ շենք մտնելու համար չի օգտագործված աստիճան, շենքի մուտքը գտնվում է զրոյական մակարդակում:

Շարժական թեքահարթակ – որը կարող է լինել երկաթյա կամ փայտյա կառուցվածք, այն հատկացված է ժամանակավոր օգտագործման համար:

1. Վրաստանի կառավարության 2016 թվականի հունվարի 28-ի №41 որոշումով կարգավորված է «Շենք-շինությունների անվտանգության կանոնների» մասին տեխնիկական կանոնակարգը, իսկ 2020 թվականի դեկտեմբերի 4-ի №732 որոշումով կարգավորված է «Մատչելիության ազգային չափորոշիչների» մասին կանոնակարգը:

Բազրիք – աստիճանը կամ թեքահարթակը պետք է ունենա բազրիք, որի բաղադրությունը պետք է լինի հարթ, և այն կլոր ձև պետք է ունենա:

Այլընտրանքային մուտք – ընտրական տեղամասում, որն ունի այլընտրանքային/մատչելի մուտք, ընտրողների համար պետք է փակցված լինեն ճանապարհի համապատասխան նշումներ:

Քվեարկության սենյակ – ցանկալի է, որ քվեարկության սենյակը լինի շենքի առաջին հարկում: Անվասայլակից օգտվող անձը պետք է կարողանա քվեարկության սենյակում ինքնուրույն տեղաշարժվել:

ո՞վ է պատասխանատու ընտրական տեղամասի տրամադրման կամ/եվ հարմարեցման համար:

Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին և 11 կետերի համաձայն՝ պետական իշխանության և մունիցիպալիտետի մարմինները, համապատասխան շենք-շինության առկայության դեպքում, ընտրական տեղամասի համար այնպիսի շենք-շինություն պետք է տրամադրեն, որը հասանելի կլինի բոլոր ընտրողների համար, իսկ այդպիսի շենք-շինության բացակայության դեպքում՝ ընտրատեղամասի համար նախատեսված շենքը, որտեղ դա հնարավոր է, այն փոխանցող մարմնի կողմից քվեարկության օրվա համար պետք է հարմարեցվի՝ ապահովելու համար բոլոր ընտրողների համար մատչելիությունը:

Հարմարեցված/մատչելի ընտրական տեղամաս պահանջելու ընթացակարգը

ո՞վ ունի հարմարեցված ընտրատեղամաս պահանջելու իրավունք եվ ինչպե՞ս:

Անվասայլակից օգտվող ընտրողն իրավունք ունի մասնակցելու 2024 թվականի հոկտեմբերի 26-ի Վրաստանի խորհրդարանի ընտրություններին համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի տարածքում գտնվող ցանկացած հարմարեցված ընտրատեղամասում, ինչի համար նա պետք է դիմի համապատասխան ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողով ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 11 օր առաջ:

Ի՞նչ ընթացակարգեր պետք է իրականացվեն ընտրատարածքային/տեղամասային հանձնաժողովի կողմից, եթե անվասայլակից օգտվող ընտրողը նրան դիմել է ընտրատեղամասը փոխելու նպատակով:

Ընտրատարածքային/տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանում գրանցում է և ստորագրությամբ հաստատում ընտրողի գրավոր դիմումը (այս դիմումի մեջ պետք է նշվի Վրաստանի քաղաքացու անձնական համարը) կամ հեռախոսային հաղորդագրությամբ ստացված բանավոր հայտարարությունը (այս դեպքում նշվում է ընտրողի անձնական համարը, հեռախոսային հաղորդագրության ճշգրիտ ժամանակը և համապատասխան հեռախոսային համարը):

Այն դեպքում, երբ ընտրողը դիմում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղեկացվում է այս ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում գրանցված ընտրողին հարմարեցված ընտրական տեղամասի հատուկ ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին: Ընտրողի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողով դիմելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 11 օր առաջ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է ներկայացնում տվյալ ընտրողի վերաբերյալ տեղեկությունը:

Ընտրողների միասնական ցուցակում նշվում է ընտրողին նույն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի տարածքում գտնվող հարմարեցված ընտրատեղամասի ընտրողների հատուկ ցուցակ տեղափոխումը, ինչպես նաև ընտրողների միասնական ցուցակում և ընտրողների հատուկ ցուցակում «Փաստական վիճակ» սյունակում արվում է «Անվասայլակից օգտվող է» գրառումը, որը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և նույն հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:

Ո՞վ իրավունք ունի վերստուգելու անվասայլակից օգտվող ընտրողների հարմարեցված ընտրատեղամասում քվեարկելու պահանջի հիմնավորվածությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն վերստուգել հարմարեցված տեղամասում անվասայլակից օգտվող ընտրողների հարմարեցված ընտրական տեղամասում քվեարկելը պահանջելու հիմնավորվածությունը և ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել այդ ընտրողներին համապատասխան հատուկ ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության հարցը: Տվյալ հարցի վերաբերյալ որոշումը տեղամասային ընտրական հանձնաժողովի տրամադրած տեղեկության հիման վրա, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ կայացնում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

Ի՞նչ կարգով է տեղի ունենում հարմարեցված ընտրական տեղամասի ընտրողների հատուկ ցուցակում ընտրողի տվյալների մուտքագրումը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացած, ինչպես նաև սեփական տվյալների հիման վրա, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ կազմում է և կարգադրությամբ հաստատում հարմարեցված ընտրական տեղամասերի ընտրողների հատուկ ցուցակը և համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին անհապաղ փոխանցում նույն հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով այս ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը, իսկ քվեարկությունից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ՝ ընտրական հանձնաժողովի համար հատկացված տարբերակը:

Հարմարեցված ընտրական տեղամասի ընտրողների հատուկ ցուցակում մուտքագրվում են ընտրողի մասին նույն տվյալները, որոնք կան ընտրողների միասնական ցուցակում և լրացուցիչ նշվում է այս ընտրողի հերթական համարը ընտրողների միասնական ցուցակում:

Հարմարեցված ընտրատեղամասի ընտրողների հատուկ ցուցակի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցված հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (առանց լուսանկարների) անհապաղ փակցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի (քվեարկության) շենքում տեսանելի տեղում:

Որտե՞Ղ է Ցանկալի Քվեարկության Սենյակի Տեղակայումը:

Քվեարկության սենյակը ցանկալի է, որ տեղակայված լինի շենքի առաջին հարկում, որտեղ սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք կկարողանան ինքնուրույն տեղաշարժվել շենքի ներսում (մուտք, որը չունի աստիճան/աստիճաններ):

Քվեարկության սենյակում ՍՀՈՒ ընտրողների համար պետք է նախատեսված լինեն հետևյալ օժանդակ միջոցները.

Քվեարկությանը մասնակցությունը պատկերող պաստառ – խուլ, լսողության խնդիր ունեցող և տեսողությունից զուրկ ընտրողների համար պետք է փակցված լինի աչքի ընկնող տեղում:

Քվեարկության խցիկ – հարմարեցված/մատչելի ընտրական տեղամասում պետք է տեղադրված լինի այնպիսի քվեախցիկ, որից կարող է օգտվել անվասայլակից օգտվող ընտրողը: Քվեախցիկի վրա պետք է փակցված լինի համապատասխան պիտակ:

Խոշորացնող ոսպնյակ – տեսողության խնդիր ունեցող անձանց համար ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի սեղանի վրա դրված պետք է լինի երկու հատ խոշորացնող ոսպնյակ:

Քվեաթերթիկը լրացնելու շրջանակ/ձև – տեսողությունից զուրկ անձանց համար ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի սեղանի վրա պետք է տեղադրված լինի շրջանակ/ձև:



Ո՞Վ Պետք է Վերստուգի, Քվեարկության Սենյակում Կա՞Ն Արդյոք Տեղադրված Սհու Ընտրողների Համար Հատկացված Օժանդակ Միջոցներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրատեղամասը կազմակերպելիս պետք է հաշվի առնի, որ՝

- ✔ Քվեարկության շենքում աչքի ընկնող տեղում պետք է փակցված լինի ընտրողի՝ քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պաստառ:
- ✔ Հարմարեցված/մատչելի ընտրական տեղամասում, քվեարկության սենյակում պետք է լինի քվեախցիկ, որը կարող է օգտագործել անվասայլակից օգտվող ընտրողը: Քվեախցիկի վարագույրի վրա պետք է փակցված լինի համապատասխան պիտակ:
- ✔ ՍՀՈՒ ընտրողների համար դյուրին պետք է լինի տեղաշարժվելը գրանցման սեղանից մինչև քվեախցիկ, այնուհետև՝ մինչև քվեատուփ:
- ✔ Քվեատուփը պետք է տեղադրվի այնպես, որ ՍՀՈՒ ընտրողները կարողանան ինքնուրույն ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով հիմնական քվեատուփերից մեկի մեջ ներմուծել քվեաթերթիկը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը մինչև քվեարկությունը սկսվելը պետք է նախատեսի, որ գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի սեղանի վրա դրված լինի երկու հատ խոշորացնող ոսպնյակ և քվեաթերթիկը լրացնելու շրջանակ/ ձև:

ՍՀՈՒ ընտրողների՝ ընտրություններին մասնակցելու ընթացակարգը

Ինչպե՞ս պետք է սպասարկի ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը ՍՀՈՒ ընտրողին:

- Եթե խուլ կամ լսողության խանգարում ունեցող ընտրողը առանց ուղեկցող անձի է քվեարկության շենքում, նրա հետ շփվե՛ք գրավոր և մատնանշե՛ք, որ ծանոթանա քվեարկության մասնակցությունն արտացոլող պաստառին: Ընտրողին բացատրե՛ք, որ քվեարկությանը մասնակցությունը պատկերող պաստառի վրա կա QR ընթերցիչ, որի սկանավորման դեպքում հնարավոր է քվեարկության ընթացակարգերին ծանոթանալ ձայնային ձևաչափով:

Տեսազանգի Ծառայություն

- Կարող եք նաև առաջարկել, որ նա հնարավորություն ունի ԿԸՀ կոնտակտ-հաբ իրականացնել տեսազանգ և ԿԸՀ կայքի միջոցով օգտվել ժեստերի լեզվին տիրապետող օպերատորի ծառայությունից: Ծառայություն ստանալու համար անհրաժեշտ է ունենալ համացանցի հասանելիություն և ԿԸՀ կայքում (www.cesko.ge) գրանցվել:
- Վերին վերջույթներ (երկու վերին վերջույթներ) չունեցող ընտրողը չպետք է անցնի նշմարման ստուգման ընթացակարգ: Վերին վերջույթներ չունեցող ընտրողը քվեարկությանը մասնակցում է ինքնուրույն կամ/և մեկ այլ անձի օգնությամբ:

Ինչպե՞ս պետք է սպասարկի գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը ՍՀՈՒ ընտրողին:

- Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին բանավոր բացատրե՛ք ձեր կողմից իրականացվելիք ընթացակարգերը:
- Գրանցում անցնելուց հետո, տեսողությունից զուրկ ընտրողին տեղեկություն տրամադրե՛ք քվեաթերթիկում առկա ընտրական սուբյեկտների հերթականության վերաբերյալ:
- Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողին բացատրե՛ք քվեարկելու համար հատկացված հատուկ շրջանակ/ձևի կիրառման և քվեաթերթիկի լրացման կարգը: Քվեաթերթիկը տեղադրե՛ք քվեաթերթիկը լրացնելու համար հատկացված շրջանակի/ձևի մեջ և ընտրողին զունավորե՛լ տվեք նույն քվեթերթիկում կատուկ առանձնացված տեղում եղած փորձնական շրջանը:



- Բանավոր բացատրե՛ք տեսողությունից զուրկ ընտրողին և ձեռքի հպումով մատնանշե՛ք ստուգումը հաստատող կտրոնի վրա ստորագրելու տեղը:
- Քվեաթերթիկի լրացման շրջանակի/ձևի յուրաքանչյուր շրջանաձև կտրվածք պետք է համընկնի քվեաթերթիկում առկա ընտրական սուբյեկտների հերթական համարներից առաջ եղած շրջանին:

- ✔ Տեսողության խնդիր ունեցող ընտրողին առաջարկե՛ք խոշորացնող ոսպնյակ և բացատրե՛ք դրա օգտագործման կարգը:

- ✔ Խուլ կամ լսողության խնդիրներ ունեցող ընտրողի համար գրե՛ք փուլերով ձեր կողմից իրականացվելիք ընթացակարգերը: Օրինակ, նրա համար գրե՛ք. «Խնդրում եմ ինձ փոխանցել Ձեր անձնագիրը». «Գնացե՛ք քվեախցիկի մոտ»:

- ✔ Վերին վերջույթներ չունեցող (երկու վերջին վերջույթներ) ընտրողը չի անցնում նշմարման ընթացակարգ, ընտրողին քվեաթերթիկը փոխանցելիս, ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում արե՛ք գրառում՝ «Ֆիզիկական վիճակ» և հաստատե՛ք ստորագրությամբ:
- ✔ Վերին վերջույթներ չունեցող ընտրողի կողմից ընտրված անձը վերին վերջույթներ չունեցող անձին օգնում է քվեախցիկում լրացնել քվեաթերթիկը:
- ✔ Աջակցություն ստացող անձին քվեարկության գործընթացում կարող է օգնել աջակցություն ցուցաբերող անձը:

Պետք է նկատի ունենալ, որ քվեաթերթիկը լրացնելիս արգելվում է այլ անձի ներկա գտնվելը: Ընտրողը, որը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունի գաղտնի քվեարկության խցիկ իրեն օգնելու հրավիրել ցանկացած անձի՝ բացառությամբ.

- ✔ ընտրական հանձնաժողովի անդամի,
- ✔ թեկնածուի,
- ✔ ընտրական սուբյեկտի ներկայացուցչի,
- ✔ դիտորդի,
- ✔ մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի:

Ինչպե՞ս Պետք է Սպասարկի Քվեատուփը Եվ Հատուկ Ծրարները Վերահսկող Հանձնաժողովի Անդամը Սիու Ընտրողին:

- ✔ Բացատրե՛ք ընտրողին, որ քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով հիմնական քվեատուփի վրա մոնտաժված սարքի մեծ այնպես ներմուծի, որ քվեաթերթիկի առջևի կողմը հայտնվի ներքևում: Եթե ընտրողը խուլ է կամ լսողության խնդիր ունի, նրան գրավոր բացատրե՛ք իրականացվելիք ընթացակարգերը:
- ✔ Նրանից հետո, երբ քվեաթերթիկը սարքի միջոցով կհայտնվի քվեատուփի մեջ, նրան բացատրե՛ք կամ թերթի վրա գրե՛ք, որ ընտրողի քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը տեղադրի դրա համար հատկացված սեղանի վրա և լքի ընտրական տեղամասը:

Պետք է նկատի ունենալ, որ «Ֆիզիկական վիճակ» (վերին վերջույթներ չունեցող) ունեցող, տեսողությունից զուրկ և աջակցություն ստացող ընտրողի փոխարեն, նրա ներկայությամբ քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով ձայների հաշվման հատուկ սարքի մեջ կարող է ներմուծել իր կողմից ընտրված ընտրողը, որը կօգնի նրան քվեախցիկում լրացնել քվեաթերթիկը:

ՍՀՈՒ ընտրողների հետ խոսելու և վարվելակարգի էթիկետը

Ի՞նչ պետք է նկատի ունենան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները ՍՀՈՒ ընտրողների հետ խոսելիս և վարվելիս:

Տեսողությունից զուրկ և տեսողության խնդիր ունեցող ընտրողի հետ

- ✔ Երբ ընտրական տեղամասում դիմավորում եք ընտրողի, որը տեսողությունից զուրկ է կամ տեսողության խնդիր ունի, անպայման ներկայացե՛ք նրան: Բարձրաձայն ասե՛ք՝ «Բարև, ես Նիոնոն/Գիորգին եմ»:
- ✔ Նրա հետ խոսե՛ք հանգիստ տոնով:
- ✔ Եթե ուզում եք ձեռքով ողջունել, նրան տեղյա՛կ պահեք այդ մասին կամ ձեռքով դիպե՛ք նրա թիկունքին, որպեսզի տեսողությունից զուրկ անձը հեշտությամբ կարողանա ձեռքով ողջունել: Բարձրաձայն ասե՛ք. «Կարո՞ղ եմ Ձեզ ձեռքով ողջունել»:
- ✔ Համառոտ նկարագրե՛ք այն տեղը, որտեղ գտնվում եք: Օրինակ՝ «Սրահի կենտրոնում ձեզանից մոտավորապես 8 քայլ հեռավորության վրա դրված է գրանցում իրականացնող անդամի սեղանը»:
- ✔ Եթե տեսողությունից զուրկ ընտրողը ուղեկցող շան (ուղեկցորդ շուն) հետ է, չխաղա՛ք շան հետ:
- ✔ Տեսողությունից զուրկ ընտրողից մի՛ վերցրեք ձեռնափայտը: Դա նրան կողմնորոշող գործիքն է:
- ✔ Տեղեկություններ տրամադրե՛ք խոչընդոտների մասին (առկայության դեպքում): Օրինակ՝ շեմ, աստիճան և այլն: Ինչպես նաև, ուղղությունը բացատրելիս օգտագործե՛ք «Ձեզանից դեպի աջ, ձախ, ներքև»:
- ✔ Տեսողությունից զուրկ ընտրողին հարցրե՛ք, թե տեղաշարժվելիս նա օգնության կարիք ունի՞: Համաձայնության դեպքում, օգնության համար դիմե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- ✔ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը տեսողությունից զուրկ կամ տեսողության խնդիր ունեցող ընտրողից թույլտվություն է խնդրում տեղաշարժվելիս օգնելու նպատակով: Դրական պատասխանի դեպքում ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահը կամ հանձնաժողովի որևէ անդամ կանգնում է ընտրողի կողքին, անվտանգ կողմնորոշվելու համար խնդրում է տեսողությունից զուրկ կամ տեսողության խնդիր ունեցող անձին, որ բռնի նրա թևը, որից հետո բացատրում է նրա կողմից կատարվելիք յուրաքանչյուր ընթացակարգ և ուղեկցում գրանցման սեղանի մոտ:

Ֆիզիկական խախտում ունեցող ընտրողների հետ

- ✔ Առանց հարցնելու մի՛ դիպեք անվասայլակին, ինչպես նաև անթույլատրելի է դրան հենվելը:
- ✔ Անվասայլակն ինքնակամ չտեղափոխե՛ք, դրա համար թույլտվությո՛ւն ստացեք: Եթե համաձայնություն ստանաք, սկսե՛ք դանդաղ տեղաշարժվել, քանի որ անվասայլակն արագ է հավաքում արագություն:
- ✔ Մինչև ֆիզիկական խախտում ունեցող ընտրողին օգնություն ցուցաբերեք, անպայման առաջարկե՛ք, թե արդյոք նրան անհրաժեշտ է Ձեր օգնությունը «Կարո՞ղ եմ օգնել Ձեզ» կամ «Ինչպե՞ս կարող եմ օգնել Ձեզ»: Օրինակ՝ ծանր դուռը բացելիս կամ մի փոքր բարձր շեմս անցնելիս:

Աջակցություն ստացող անձի հետ

- ✔ Նրա հետ չխոսե՛ք «մանկական լեզվով», նրա հետ մի՛ վարվեք, ինչպես երեխայի հետ: Դիմե՛ք, ինչպես ցանկացած մեծահասակի կդիմեք:
- ✔ Մի՛ մտածեք, որ չի հասկանում ձեզ:
- ✔ Խոսե՛ք հասկանալի լեզվով, կարճ և պարզ նախադասություններով:
- ✔ Եթե ծանոթ չէ քվեարկության ընթացակարգին, ցո՛ւյց տվեք քվեարկության մասնակցությունն արտացոլող պաստառը:
- ✔ Մի՛ փորձեք խոսքն արագացնել: Պատրաստ եղե՛ք, որ խոսքի դժվարություն ունեցող անձի հետ շփումը հնարավոր է համեմատաբար ավել ժամանակ պահանջել:
- ✔ Նկատի՛ ունեցեք, որ խոսքի խանգարումը ավտոմատ կերպով մտավոր խանգարման ցուցիչ չէ:
- ✔ Աջակցություն ստացող անձը քվեարկությանը կարող է մասնակցել ինչպես ինքնուրույն, այնպես էլ աջակցողի (մեկ այլ անձի) օգնությամբ:

Խուլ կամ լսողության խնդիր ունեցող ընտրողների հետ

- ✔ Երբ խուլ կամ լսողության խնդիր ունեցող ընտրողի հետ եք խոսում, նայե՛ք ուղիղ նրան: Լսողության խանգարման տարբեր տեսակներ և աստիճաններ կան, հետևաբար կան շփվելու բազմաթիվ միջոցներ:
- ✔ Եթե բանավոր հաղորդակցության մեջ դժվարություններ ունենաք, զրուցակցի թույլտվությամբ դիմե՛ք գրավոր շփման: Գրե՛ք գործառույթների մեջ ներառված բոլոր ընթացակարգերը: Օրինակ՝ գրեք. «Խնդրում եմ, տրամադրե՛ք ինձ Ձեր անձը հաստատող փաստաթուղթը»:
- ✔ Եթե խուլ կամ լսողության խնդիր ունեցող ընտրողը ընտրատեղամաս ներկայանա ժեստերի լեզվին տիրապետող ուղեկցող անձի հետ, նա քվեարկության ընթացակարգը կանցնի նրա օգնությամբ: Չդիմե՛ք անմիջականորեն ուղեկցող անձին, կարող եք զրույցի ընթացքում պարբերաբար նայել նրան: Կարևոր է ընտրողի հետ բարեհաճ տրամադրված շփում հաստատելը: